ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

— ————2010 թվականի N————Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 3–րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Տալ համաձայնություն՝

1) սեփականության իրավունքով Ռազմիկ Հովակիմյանին պատկանող Երևանի Հովսեփյան փողոց 10 հասցեի թիվ 7 հողմասի (Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 14.11.2003թ. հ.1656775 վկայական) 22.0քմ մակերեսով հատվածը նույն հասցեի հարևանությամբ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 22.0քմ մակերեսով հողամասի ,

2) սեփականության իրավունքով Լաուրա Պետրոսյանին պատկանող Երևանի Մյասնիկյան պողոտա թիվ 5/7 հասցեի (Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 29.11.2005թ. հ.2112116 վկայական) հողամասի 738.9քմ մակերեսներով հատվածը նույն հասցեի հարևանությամբ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 738.9քմ մակերեսով հողամասի,

3) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևանի Դրոյի փողոցին հարող տարածքում գտնվող 284.0 քմ հողամասը (տարածագնահատման 7-րդ գոտի) Երևանի Ա.Ահարոնյան փող. հ12/4 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Ժենիկ Չախալյանին պատկանող 120.0 քմ մակերեսով (տարածագնահատման 5-րդ գոտի)(Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 19.12.2007թ. հ.2515995 վկայական) հողամասի,

4) սեփականության իրավունքով «Ֆինստրոյ-Արտհաուզ» ՍՊԸ-ին պատկանող Երևանի «Զորագյուղ» ազգագրական թաղամաս հ. 21/1 և «Զորագյուղ» ազգագրական թաղամաս 1-ին փողոց հ. 21/2 հասցեներում (Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման 16.07.2010թ. հ. 2674563 և 23.11.2009թ. հ. 2549065 վկայականներ) «Զորագյուղ» ազգագրական թաղամաս հ. 21/1 հասցեով 1154.0քմ. մակերեսով հողամասից 24.3քմ. մակերեսով հողատարածքը,

1154.0քմ. մակերեսով հողամասին կից նույն մակերեսով, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի և «Զորագյուղ» ազգագրական թաղամաս 1-ին փողոց հ. 21/2 հասցեով, 400.0քմ. մակերեսով հողամասից 150.0քմ. մակերեսով հողատարածքը, 400.0քմ. մակերեսով հողամասին կից 108.0քմ. և 1154.0քմ. մակերեսով հողամասին կից 42.0քմ. մակերեսներով, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների հետ փոխանակելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Գ. Բ Ե Գ Լ Ա Ր Յ Ա Ն

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. Բ Ե Գ Լ Ա Ր Յ Ա Ն

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք –Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի Նոր—Նորք վարչական շրջանի Հովսեփյան փողոցին հարող հատվածում ներթաղամասային ճանապարհային ցանցի կանոնանկարգման, ինչպես նաև սեփականության իրավունքով Ռազմիկ Հովակիմյանին պատկանող հողամասի օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվում է փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 22.0քմ մակերեսով հողամասը սեփականության իրավունքով Ռազմիկ Հովակիմյանին պատկանող հողամասի 22.0քմ մակերեսով հատվածի հետ:

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մյասնիկյան պողոտա հ.5/7 հասցեի հողամասի սեպաձևությունը վերացնելու և հողամասի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատկով առաջարկվում է փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 738.9քմ մակերեսով հողամասը սեփականության իրավունքով Լաուրա Պետրոսյանին պատկանող հողամասի 738.9քմ մակերեսով հատվածի հետ:

Հ. Ներսիսյան փողոցի հ.19 հասցեում «Սուրբ Ներսես Մեծ» գիտաբժշկական կենտրոնի տարածք մուտքի կազմակերպումը առնչվում է Ա. Ահարոնյան փողոց հ.12/4 հասցեում սեփականության իրավունքով Ժենիկ Չախալյանին պատկանող 120.0քմ մակերեսով հողամասի հետ: Հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև հողամասերի փոխանակման վերաբերյալ Ժենիկ Չախալյանի դիմումը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանի դիվանապետ Արշակ Եպիսկոպոս Խաչատրյանի գրությունը առաջարկվում է փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևանի Դրոյի փողոցին հարող տարածքում գտնվող 284.0քմ մակերեսով հողամասը (տարածագնահատման 7-րդ գոտի) Երևանի Ա. Ահարոնյան փողոց հ.12/4 հասցեում սեփականության իրավունքով Ժենիկ Չախալյանին պատկանող 120.0քմ մակերեսով հողամասի (տարածագնահատման 5-րդ գոտի) հետ:

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի «Զորագյուղ» ազգագրական թաղամասի սպասարկման նպատակով նախատեսվող ճանապարհային ցանցի համար անհրաժեշտ տարածք ապահովելու նպատակով առաջարկվում է փոխանակել սեփականության իրավունքով «Ֆինստրոյ-Արտհաուզ» ՍՊԸ-ին պատկանող 1154.0քմ. մակերեսով հողամասից 24.3քմ. մակերեսով հողատարածքը, 1154.0քմ. մակերեով հողամասին կից 24.3քմ. մակերեսով Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի և 400.0քմ. մակերեսով հողամասից 150.0քմ. մակերեսով հողատարածքը, 400.0քմ. մակերեսով հողամասին կից 108.0քմ. մակերեսով և 1154.0քմ. մակերեսով հողամասին կից 42.0քմ. մակերեսով, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի հետ:

Գ. Բ Ե Գ Լ Ա Ր Յ Ա Ն